

ՆՈՐ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ԶՎԿԱՑՎԱԾ ԲԱՌԵՐ V ԴԱՐԻ
ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նոր Հայկազյան բառարանը (այսուհետև ՆՀԲ)¹ բառարանագրության մնայուն կոթողներից մեկը, ըստ հնարավորին արտացոլել է գրաբարի, այդ թվում և V դարի մատենագրության բառապաշարը. ավելին՝ վերջինս, ըստ էության, այդ բառարանի հենքն է։ Սակայն V դարի գրաբարի բառապաշարի մի որոշ մաս չի ընդգրկվել բառարանում։ Դա վերաբերում է նաև ինքնուրույն գրականությանը, որն ընդհանուր առմամբ ավելի համապարփակ է արտացոլված, քան թարգմանական գրականությունը՝ բացառությամբ Աստվածաշնչի։ Այդ բացթողումները կարելի է պատճառաբանել մի քանի հանգամանքներով. ա) մի շարք բառեր պարզապես վրիպել են բառարանագիրների ուշադրությունից, բ) բառերի մի մասը չի ընդգրկվել՝ համաձայն բառարանի սկզբունքների (հատուկ անուններ, օտարաբան և հունաբան որոշ ձևեր), գ) բառարանագիրների ձեռքի տակ չեն եղել քննական բնագրեր (որոնք հիմնականում հրատարակվել են բառարանի լույս ընծայումից հետո), դ) անկախ այլևայլ պատճառներից այդ կարգի բառարանները չեն կարող լրիվ ներառել գրաբարի բառապաշարը։

Ստորև ըստ հեղինակների կառանձնացնենք այն բառերը, որոնք ՆՀԲ-ն չի ավանդել։ Ըստ անհրաժեշտության ու հնարավորության կարվեն բառաքնական դիտողություններ, ճշգրտումներ ու այլ կարգի նկատառումներ։ Նյութը քաղել ենք քննական կամ այդպիսի համարում ունեցող բնագրերից։

Կ Ո Ր Ց ՈՒ Ն

Աշխարհաճալած—«Աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին» (86)։ (ՆՀԲ-ում աշխարհալած՝ այս օրինակի հղումով)։ Գրաբարում հոգակապավոր և անհոգակապ զուգաձևեր շատ կան, որոնք վկայում են բառարանները. նշված հոգակապավոր ձևը չի վկայված։

Աշխարհաճեմ—«Եւ նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս...» (48)։ Մ. Արեղյանը բառը չի թարգմանում (աշխարհահեծ հոգսերը)։ Այս բառը համարյա նույն համատեքստում օգտագործել է և Ագաթանգեղոսը. «Զպահս, և զաղօթս, զտքնութիւնս, զպաղատանս արտօսրաբերս, զխստամբերութիւնս, զհոգս աշխարհաճեմս» (432)։ Ընդգծվածը Վ. Առաքելյանը թարգմանում է «համասուգ»², Առձեռն բառարանը (այսուհետև ԱԲ) մեկնում է «ամէնը մեկտեղ հեծելով»։ Անվերապահորեն շմբոթելով բառի ստուգությունն ու եղած բացատրությունները՝ առաջարկում ենք աշխարհաճեմ ուղղումը, որտեղ բարդության առաջին բաղադրիչը աշխարհողը, սուգ» բառն է։ Ի դեպ աշխարհաճեմ ավանդում է ԱԲ-ն՝ «ողորմվ՝ հառաչանքով եղածը» մեկնությամբ։ Քանի որ ԱԲ-ն վկայության աղբյուրը չի նշում, բնականաբար չենք կարող հավաստել, որ այն նկատի ունի Կորյունի կամ Ագաթանգեղոսի վկայությունը։ Աշխարհաճեմ ունի և ՆՀԲ։

1 Կ Ո Ր Ի Ն. Վարդ Մաշտոցի. Երևան, 1941։

2 Վ. Դ. Առաքելյան. Անարկներ հայոց զրական լեզվի պատմության. Երևան, 1981, էջ 155։

Մատենանշան—«Ջմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել» (22): ՆՀԲ-ն այս օրինակի հղումով ունի մատենանշան: Ձեռագրերը երկու ձևերն էլ վկայում են: Մ. Աբեղյանը ճիշտ է համարում մատենանշանը և թարգմանում. «Մտածում էր մի առանձին մատյանի մեջ գրված հիշատակարանները ծաղկեցնել»:

Պսակաճաս կէտ—«Անդ քաջալերութիւն... առ ի յառաջադէմ ընտրութեանն պսակահաս քրիստոսադիր կիտին» (82): Պսակաճաս կէտ ըստ ԱԲ-ի «է պսակ յաղթողին տալու», ըստ Աբեղյանի՝ «այն տեղը, ուր գրված է լիւնում պսակ՝ մրցության մեջ հաղթողին տալու համար»:

Վարդապետասէր—«Այր վարդապետասէր էր և ճշմարտապատում» (96):

Ե Զ Ն Ի Կ Կ Ո Ղ Բ Ա Յ Ի Կ

Ակնբաց—«Քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել, թուի թէ ի ծովէ ելանիցէ» (190): Այս նախադասությունը ՆՀԲ-ն բերում է բաց բառի տակ՝ գերադասելով անշատ գրությունը և մեկնում՝ «բաց ակն կամ ի բացագոյն ցամաք»: Ա. Արրահամյանը ակնբաց թարգմանում է «տեսադաշտ». «Քանի որ չեն կարող տեսադաշտը ցամաքին հասցնել»:

Ելէա—«Վասն զի ձիթենի յունարէն ելէա կոչի» (207): Հունարեն բառ է հայերեն գրությամբ. նման կարգի օրինակներ, ընդհանրապես, բառարանները նշում են, սակայն այս բառը չկա գրաբարի ոչ մի բառարանում:

Մարմնապիշ—«Իսկ ստոյիկեանքն մարմնապիշք հայեցեալ յերեւելի աշխարհս զամենայն ինչ մարմին կարծեցին» (227): Բառը ունի ԱԲ-ն՝ «քննող»: Ծիծ բառարանը նկատի է ունեցել Եղնիկի օրինակը, ապա թերևս բառիմաստը մեկնել է ակնապիշ-ի համաբանությամբ. Մարմնապիշ-ը այս համատեքստում փիլիսոփայական տերմին է, այս առումով ավելի համոզիչ է Ա. Արրահամյանի թարգմանությունը՝ «նյութապաշտ»:

Մենակերպ—«Ձի եթէ պարզ բնութիւն է հիւղն և մենակերպ... անհնարին է ասել եթէ հիւղայն լեալ իցէ»: Ըստ ԱԲ-ի «միակերպ»: Ա. Արրահամյանը թարգմանում է «միատարր»:

Նուագածութիւն—«Որպէս ոք ճարտարութիւն իրաց ինչ դիտիցէ, եթէ զնուագածութիւն և եթէ բժշկութեան» (236): Նուագածութիւն նշանակում է երաժշտություն: Վերջինս վաղ գրաբարում վկայված չէ. ՆՀԲ-ի միակ օրինակը Լամբրոնացուց է: V դարի գրաբարում կա երաժիշտ, երաժշտական, երաժշտակ: Թեև Արմ-ում երաժիշտ-ը ստուգաբանված չէ, բայց ամենայն հավանականությամբ այն իրանական փոխառություն է, որը V դարում լայն գործառություն չունեի կամ ավելի ճիշտ բնորոշ էր գրական ոճին: Նուագածություն-ը, ընդհակառակը, գործածության ավելի հին ակունքներ ունի և համաժողովրդական կիրառություն: V դարից առկա են նաև նուագ, նուագածու, նուագայարդար, նուագաբան, նուագաւոր, նուագեցեմ...:

Ոգեղէն—«Վասն տարածութեան միայն և արագութեան կոչին հրեշտակ և դեւք և հոգիք մարդկան ոգեղէնք, որ է հողմեղէնք» (92): Բառարանները ունեն նոգեղէն ձևը:

3 Կորյունի մոտ առկա հետևյալ բառերը թեև կան ՆՀԲ-ում, բայց վկայությունները Կորյունից չեն, այլ ժամանակագրորեն ավելի ուշ. աշակերտակից, աշխարհակիցայց, առաքելագործ, առանձնաթուղթ, խառաբաւ, խառաբերութիւն, մարաբաւարան, մեծամարտիկ, պարգեւակցան:

4 Եղնիկայ Կողրացուի Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826:

5 Եղնիկ Կողրացի. Եղծ աղանդոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Արրահամյանի. Երևան, 1970, էջ 232:

6 Նույն տեղում, էջ 144:

7 Նույն տեղում, էջ 44:

Չարաբարել—«Այնպիսի՝ արգելք արար զնա Աստուած, եթէ ինքնին այնպիսի չէր և յօժարեաց ի շարարարել» (52): Ոմանք հակված են բառը կարդալու շարաբարել: Իրավացի է Վ. Առաքելյանը, գրելով. «Չարաբարել բայը կասկածի տակ է առվել դարձել շարաբարել միանգամայն անտեղի ու սխալ կերպով: Գրաբարում բռնաբարել բայը նշանակում է բռնի կերպով վարել, բռնի մի բանի մղել: Եվ Եղնիկը այստեղ մարդուն խաբելու, չար բանի մղելու, շարաբարելու հանգամանք է ճշտագույն իմաստավորմամբ նշում»⁸:

Սերմնարկու—«Մեծի ծաղու արժանի է՝ եթէ ինքն հայր իցէ և ինքն մայր և նոյն սերմնարկու և նոյն սերմնընկալ» (135):

Փ Ա Վ Ս Տ Ո Ս Բ Ո Ւ Զ Ա Ն Դ Յ

Աշխարաւանդ «թագի կապ»—«Զսոյն և սպարապետ Մանուէլի ետ տա-նել... հանգոյցք թագի կապեալ աշխարաւանդ» (207): Ունի Արմ-ը:

Արջն «սև»—«Յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա» (32): Անկախաբար բառը հանդիպում է միայն Բուզանդի մոտ: Որպես բա-ղադրիչ առկա է արջնագոյն, արջնաբոլոր բոլորովին մութ, արջնաթոյր, արջնագգեստ, արջնղեղ... բառերում:

Բռնաբարութիւն—«Այլ բռնաբարութիւն և միաբանութիւն և հրաման աստուծոյ, մանաւանդ առ նախնեօքն» (60): Գրաբարի բառարանները չեն վկայել, իսկ Արմ-ը նշում է որպես նոր բառ: Ս. Մալխասյանը թարգմանել է ճարկադրաբան: Նույն նախադասութեան մեջ առկա միաբանութիւն-ի համա-բանութեամբ բառը կարելի է ուղղել բռնաբանութիւն, բայց հաշվի առնելով շարաբարել-ի առիթով հայտնած նկատառումները, կարելի է և շուղղել:

Գետախառնում—«Մարդպետ հայր... էշ յափն գետոյն հոսանացն Եփ-րատու... ի գետախառնունսն երկուցն գետուց» (98): Բառը ակնհայտորեն ժողովրդախոսակցական շերտին է պատկանում:

Եկեղեցախառնում—«Իսկ իբրեւ տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն» (100):

Եղեղեցաբերան «եղեղեցուտների մոտ, մինչև եղեղեցուտները սկսելը»—«Ի մայրեացն յեղեղեցաբերանին ...լցին զգաշտն կաղնատուն տնկով և կոշեցին զանուն նորա խոսրովակերտ» (16):

Երամակակայ «ձիանոց, երամակի գտնվելու վայրը»—«Ապա սրտմտու-թեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ յերամակակայն արշաւէր, զի հնար լիցի նմա նախ ըմբռնել եւ հասեալ ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտանէր» (213):

Իրաբալ «իրապես քաջ»—«Հանապազ յամենայն ժամ յաղթօղ ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատե-րազմի» (57):

Կանանցաճանդերձ—«Զիարդ ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարգկան տուեալ է» (97): Հայր մարդպետի արհամարհական խոսքերն են: Նկատի ունի հոգևորականներին:

Կարճազատ—«էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջէ կարճազատացն» (42): ԱԲ-ն բառի առաջին բաղադրիչը համարում է կա-րճ-ը և մեկնում՝ «օձ ու կարիճ, չարաճճի»: Եթե նկատի է առված Բուզան-դի օրինակը, ապա, ինչ խոսք, բացատրությունը գոհացուցիչ չէ: Հավանորեն ճիշտ է Ս. Մալխասյանի ենթադրությունը, թե կարճազատները, ստորին աս-տիճանի ազատներ (ազնվականներ) էին, ազատների հեռավոր ազգական-ներ¹⁰:

⁸ Վ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 126:

⁹ Փառտոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883:

¹⁰ Փալստոս Բուզանդ. Հայոց պատմութիւն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունը Ս. Մալխասյանի, Երևան, 1969, 318:

Շերտափակ—«Առնէին համար գերույն և ի մէջ շերտափակ զօրացն պահէին» (146): Ս. Մալխասյանը թարգմանում է. «Գերիններին հաշվեցին և տապարավոր զորքերով շրջապատեցին» (218): Այս թարգմանությունը առարկելի է: «Շերտափակ զօրացն» նշանակում է ոչ թե տապարավոր զորք, այլ «պարսպապատ զորակայն»: Հմմտ. Եղիշեի հետևյալ նախադասությունը. «Սև անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա՝ բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրեւ զքաղաք ամենայն պատրաստութեամբ» (105):

Ջարասիրտ—«Այր ներքինի շարասիրտ, շարախորհուրդ, շարագործ...» (40):

Սիւս—«Առի գնացի զԳնել, տարայ մինչեւ յորմ Սիւսին սպանի և անդէն թաղեցի» (101): Թեև զպատանեակն Գնել առնուին գնային մօտ ի սիւսն արքունի և անդէն կառափէին ի սարակ լերին» (102): Հայկազյան բառարանագիրները բառը համարել են հատուկ անուն և չեն զետեղել բառարաններում: Ըստ Արմ-ի՝ «չորս կողմը պատ քաշած արհեստական մեծ որսատեղ»: Ուրարտագետ Հ. Կարազյոզյանը սիւս-ը կապում է ուրարտական susi «ուղղանկյունաձև տաճար»-ի հետ, որը հայերենում հանդես է գալիս որոշակիորեն իմաստափոխված և նշանակում է արդեն ոչ թե տաճար, այլ ապարանք¹¹:

Սորակալ «ախոռակետ»—«Կամ զիարդ Վասակ Մամիկոնեան սպարապետ Հայոց սպանէր զսորակալ ասպատանին արքային պարսից» (105):

Սրեգաճար— «Սև առ հասարակ թմբկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք» (196):

Տապարիկ/ապարիկ—«Յաղագս Դմայունդ Վսեմականայ, որ իննսուն բիրուն տապրիկ զօրօքն՝ զոր առաքեացի վերայ Արշակայ Հայոց» (53, 125): Վ. Առաքելյանը դիտում է որպես զրափոխության հետևանքով այլակերպված բառ՝ պատրիկ¹²: Սա առարկելի է, առավել ընդունելի պետք է համարել «տապարակիր» բացատրությունը¹³:

Տառապելաւէր—«Ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլոս: Մանաւանդ վասն սրբութեան վարուցն նորա... և կամ վասն աղքատսիրութեանն և վասն տառապելաւէր վարուցն» (80):

Տեառնաշակեռա—«Սոյնպէս և առաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք... (?)»: Բառակազմական կաղապարը հարազատ է գրարարին. հմմտ. տեառնամայր, տեառնաղբայր, տեառնորդի:

Քրիստոնէամիտ—«Եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն... այր Քրիստոնէամիտ» (224): Ըստ ԱԲ-ի «աստուածապաշտ»:

Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս 14

Ամաճոր—«Ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին» (435): Ըստ երևույթին բառը գրաբարում միակ վկայությունն է: Ագաթանգեղոսի որոշ ձեռագրերում ամաճորաբեր է, որը վկայում է և ՆՀԲ-ն՝ «բերող զնոր տարի և զբերս երախայրիս» բացատրությամբ: Որոշ կասկածներ կան ամաճոր բառի ամ «տարի» բաղադրիչի իսկության, հետևաբար, և ընդհանուր բառիմաստի վերաբերյալ: Բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Զիհանյանը բնագրային ու համատեքստային մանրազնին քննությունից ենթադրում է

¹¹ ՀեՍՁ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1958, № 9:

¹² ՏԵ՝ս ՀեՍՁ ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատություններ, III, 1948:

¹³ ՏԵ՝ս Երևանի պետական համալսարանի գիտական Տեղեկագիր. հ. 85, պրակ 3, 1963, էջ 26:

¹⁴ Ա գ ա Թ ա ն գ ե ղ ո ս. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909:

ամհա «ամբողջ» բառի առկայությունը¹⁵։ Բոլոր դեպքերում ստույգ չէ ամանոր «նոր տարի» բառի գոյությունը V դարում։

Անկարծաղկամ «անկասկած» — «Որոց կարի իսկ ուրախութիւն եղել և լինի ընդ անկարծակամ դարձ կենաց» (243)։

Անկու «հարմար, պատշաճ» — «Եւ ոչ եկամուտ ոք, այլ կամարածուն վայելութեան, շառաւելն Մովսիսի... օծութեանն անկու, առեալ զպատիւ նախնեացն քահանայութեան» (213)։ Անկ «պատշաճ» բառի ածանցված ձևն է։

Անունը — «Վասն այնորիկ զծովն անունը անհամութեան քամեալ» (279)։ Աբ-ի «հատակ շունեցող ծով» բացատրությունը թերևս նկատի ունի այս օրինակը։

Անսքափ «անմոռաց» — «Անսթափ ի մտացն ուշի յիշեսցէ զյիշատակս ծառոյն» (150)։

Առաջագիր «նախկինում գրված» — «Ջառաջագիր աւետարանն յիշատակելով սկիզբն դնէ» (247)։

Առաքելաբան — «Արդ այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց իւրոց առաքելարան առաքելագործ վարեալ» (468)։ Որոշ ձեռագրերում՝ առաքելալան, առաքելաբան։ Քննական բնագրի առաքելաբան ձևը առաքելի չէ։ Ազաթանգեղոսը նույն իմաստով կիրառում է և առաքելախօս (303)։

Արտօւրաբեր — «...զաղօթս, զտքնութիւնս, զպաղատանս արտօւրաբերս» (432)։ Այլ ձեռագրերում՝ արտասուաբեր։

Աւագագիր — «Յափնածիր յաւագագիր սահմանս բարձրացելոցն ընդդէմ հասեալ ի ցամաքակէտն ծիծաղեսցին» (2)։ Աբ-ի «ավագով գրված սահման» բացատրությունը նկատի ունի այս օրինակը։

Բարեխնգիր — «Որոց բարեխնդրացն բարութեան ուրախութիւն պատրաստեցին» (252)։

Դարալիք «նոր, ընդարձակ» — «Եւ ածին իբրեւ զծով դարալիք՝ զխաղաղութիւն» (352)։

Զարմանատես — «...ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան» (384)։

Մառախիթ լինել «ծառերի արանքում թաքնվել» — «Նոցա փախուցեալ ծառախիթ տերեւապատ լինէին» (147)։

Հրեշտակակից «հրեշտակներին ընկերակից կամ հրեշտականման» — «Բայց աստուած զմարդն միայն բազմապատիկ փառաւորեաց և մտօք մեծացոյց, հոգեխառն հրեշտակակիցս խոնարհագոյնս արար» (138)։

Հրեշտակատես — «Նոյն օրինակ և ամենայն հրեշտակատեսացն» (166)։

Մենաւորաստան «Մենաստան» — «...զսուրբն Արիստակէս բնակեալ յանապատի, մենաւորաստանին» (452)։

Մէջգետին «երկրի մեջ, կենտրոնում» — «Նա ինքնին բազուկս ի վեր հարեալ ի մէջգետին անցեալ պարգեւատու լինի իւրոցն արժանեացն» (290)։

Յանախատարած «լայնատարած» — «Բռնավարեալք ի վերայ յորձանացն յաճախատարած լայնացելոցն դանդաչիցեն» (5)։

Շարաթութիւն «շաբաթ, յոթնօրյակ» — «Որ և բովք ի շաբաթութեան ամացն աշխատութեանց» (346)։

Պակասամտազոյն — «Քան զեզն և զէշ պակասամտազոյն գտայք» (37)։

Պղծագունդ — «Կղծագունդ այսոց... ոգիքն զազգս մարդկան աներկիւղ պահեսցին» (164)։ Բառը կարելի է թարգմանել «պիղծերի բազմություն»։ Համանման կազմություն է և Ազաթանգեղոսի հրեշտակազունը։

Սանմանաբաբոյց «սահմանափակ» — «Եւ ոչ եթէ անշափակալ բնութիւնն Աստուծոյ՝ սահմանաթաքոյց և կողմնափակ իցէ» (169)։

Սատանայապաշտ — «Գերէր զամենեանս ի հայրենեացն աւանդելոց ի սատանայապաշտ դիւական ի սպասաւորութենէն» (408)։

¹⁵ Այս ենթադրությունը Վ. Զիհանյանը հայտնել է ԳԱ Լեզվի ինստիտուտի 1988 թ. տարեկան գիտական նստաշրջանում կարդացած զեկուցման մեջ, որը անտիպ է։

Սկզբնագործ «նախաստեղծ» — «Որոյ սկիզբն արարեալ ուսուցանելոյ՝ յամենաստեղծ յսկզբնագործ ժամանակէն... ամենեցուն աւանդեաց զճշմարիտ գիտութիւն» (133):

Սնտախմաց «դատարկ, սին» — «Խորհուրդ առեալ, սնտախմաց խորհուրդ, շինել ի պաշտօն մեհենից աշտարակ մի բարձր» (293): ԱՌ-ի «փուլ խորհուրդ» բացատրութիւնը թերեւ նկատի ունի այս օրինակը:

Սուրբընկալ — «Երթեալ անկանէր զսուրբընկալ արկեղօքն երանելի մարմնոց քրիստոսական վկայիցն՝ մատուցանել պաղատանս» (396): Սուրբընկալ արկղ պետք է թարգմանել «սրբի տապան»:

Սպիտակեալ — «Թուցեալք ի թռիչս արագութեան սպիտակեալման աղանեաց» (309):

Ստեղծութեան գործ — «Ի ստեղծութեան գործ ժամանակէ անտի մինչեւ ի վախճանելոյ ժամանակն» (331):

Վերեանկիւն — «Քանզի խաչն, որ կանգնականն՝ զյաղթականն ցուցանէ, վերեանկիւն զյաղթութիւնն ցուցանէ» (243):

Վերեալուր — «Զի վերեալուրցն դուռնք բացցին երկնից» (207):

Փռախալակ «դիմաց, փոխարեն» — «Եւ եղեալ զնեղութիւնս շարշարանաց առաջի, զի ընդ վաստակոցն ճգնութեանցն, ոչ ձրի ալ վարձուցն փոխարինակ բռնութեամբ համբերութեան ըմբռնեացեն» (355):

Ներքոհիշյալ բառերը թեւ կան նշ՝ ում, բայց վկայութիւնները Ազաթանգեղոսից չեն, այլ՝ ուշ շրջանի: Ազատիմաստ, ամենաստեղծ, ամենասփիտ, դիւցամալ, երկառակաց, երկնաշու, երկառաւորութիւն, խաչանիշ, կարճամտեմ, հայրապետական, մեծապանծ, յաճախաշատ, շնորհապարգեւ, պարգեւաբեր, պարգեւառու, պարտառու, սնուցիչ:

Ե Ղ Ի Շ Ե Ի 8

Ամպարտեալ — «Գիտէր և զամպարտեալն» (143): Պարթեական կրօնին վերաբերող հասկացութիւն է:

Աստուածագաւակ — «Միհրն աստուած մայրածին էր ի մարդկանէ և թագաւոր աստուածագաւակ» (35):

Գետնաբեկ — «Զի ցերեկ արեակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք» (201):

Գետնակաղիւն — «Համարեալ էին նոցա դարափորքն իբրեւ զյարկս բարձրաբերձ շինուածոց և գետնակաղիւնք իբրեւ զնկարեալ պատշգամս» (124):

Խոնաստան — «Եւ իբրեւ եհաս նամակն յարքունիս և ընթերցան ի մեծի խոնաստանի... բազումք գովէին զպատասխանիսն» (41): Բառն, անշուշտ, իրանական ծագում ունի, որի իմաստը ստույգ չէ: ԱՌ-ն համարում է պարսից թագավորական պալատի պալատի պատվո անուն, Արմ-ը՝ «պարսից թագավորական պալատը կամ ատյանը»: Խոնաստան-ը կարելի է և թարգմանել «սեղանատուն», պրս. xuan «սեղան» բառից: Այս արմատը հայերենում ներկայանում է խան, խուն, խոն ձևերով:

Մայպետ — «Արդ զվեց զայս սուրբս յանապատին, ուր կատարեցին, Դենշապուհ և մոզպետն և Զնիկան մայպետն անդէն ի տեղւոցն պահապանս ընտրեցին» (179): Իրանական վարչական տերմին է: Բուն հասկացութեան վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Արմ-ում ստուգաբանված չէ: Աճառյանը չի ընդունում may «գինի» + պետ ստուգաբանութիւնը: Իրանագետ Հ. Բեյլին նկատելով, որ մայպետ-ը միշտ հանդես է գալիս ջնիկան բառի հետ, որը մեզանում դիտվում է որպէս մականուն, իսկ ծագումնաբանորեն իրանական jamikan ածականական ձևն է, jam, ավետ. jani «կին» բառից, ենթադրում է, որ մայպետ սկզբնապէս նշանակել է «կանանց հսկիչ, վերակացու»¹⁷: Հետագայում այն թերեւ նախնական իմաստից զատ ձեռք է

¹⁶ Ծղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին. Երևան, 1957:

¹⁷ Յե՛ս Transactions of the Philological Society. London, 1956, p. 112.

բերել արքունական բարձր մի տիտղոսի նշանակություն: Նշենք, որ Եղիշեի մոտ մայայետ և մարգպետ նաև համանիշներ են:

Պատուավուրֆ—«Կապէր և զպատուավուրսն և զխորն ոսկեղէն դնէր ի վերայ» (136): ԱՐ-ն և Արմ-ը մեկնում են «զլիսի մազի զարդ»: Աճառյանը հաշվի առնելով անձեացյաց օրինակի՝ մեզ հետաքրքրող բառի փոխարեն վկայած զպատիւ վարսին կապակցությունը (վարսակալ), պատուավուրֆ-ը համարում է ձեռագրական վրիպակ: Եթե իրոք աղավաղում առկա է, ապա ենթադրելի է նաև իրան. վարս «մազ»-ի աղավաղում, իսկ պատ (իրան. pati) մասնիկով կազմություններ հայերենին խորթ չեն. հմմտ. մունակ-պատմունակ և այլն:

Մ Ո Վ Ո Ն Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի Ց

Արղաձեռնագոյն—«Եւ բազում ամբոխս արի արանց և որք ի տէգ նի-զակի և յաղեղն և ի սուսեր աշողաձեռնագոյն՝ գումարէր» (65): ՆՀՐ-ն օրի-նակը բերում է աշողաձեռն բառի տակ:

Արխայմաեռիկ—«Կալաւ զաշխարհս մեր... ամս քսան և վեց և յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ, որ լսի արքայամանուկ» (216): Հստ երևույթին ՆՀՐ-ի հեղինակները չեն զետեղել՝ դիտելով որպես հատուկ անուն: Արքայամանուկը իրան. Շապուհ անձնանվան թարգմանություն-ստու-գաբանությունն է: Sah «թագավոր», puh>puh «որդի»: Նշված բառը ուշա-գրավ է մեկ այլ առումով. ի հայտ է գալիս մաեռիկ «որդի» իմաստը, որը վաղ գրաբարում ըստ էության վկայված չէ: Այդ իմաստը չի նշում ԱՐ-ն, Արմ-ը, իսկ ՆՀՐ-ն թեպետ նշում է, սակայն վկայած օրինակները համոզիչ չեն:

Գաճաբար—«Եւ զշաբաղ ոմն անուն ի վերայ և զԱբել սպասարար և դահարար» (110): Պաշտոնի անվանում է, որը գրաբարի բառարաններում ավանդված չէ: Խորենացու որոշ ձեռագրերում և հրատարակություններում՝ գաճաբար, որը բերում է և ՆՀՐ-ն:

Գեղեցկադիմակ—«գեղեցիկ, գեղեցիկ կերպարանքով»—Զկոյս մի գե-ղեցկադիմակ, ի քերցն Արտաւազդայ, դողացեալ... ի կեսարացուց քաղաքն ապրեցուցանէր» (217): Միջ. պրս. demak «կերպարանք, ձև» բառից կազմ-ված բարդություն է, որ անպայման Խորենացու կերտածն է:

Պատարկակաց—«Վիճակաւորք, հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք» (364): Որոշ ձեռագրերում՝ դատարկասացֆ, դատասացֆ: ԱՐ-ն ունի դատարկակեաց «պարապ»:

Երկնադէզ—«Դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք եւ երկնա-դիզօք հասակօք սկայիւք մրցողք» (34): Բառարանները ունեն երկայնադէզ՝ այս օրինակի հղումով:

Կարմրիկ—«Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ» (86):

Հեղուսուած—«Եւ ի հեղուսուածս արուեստին, որ զքարամբքն՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւեցուցանէ կարծիս» (52): Մ. Մալխասյանը գտնում է, որ առուեստին հատկացուցիչը անտեղի է, և ճիշտ է համարում երկու ձեռագրերի վկայած ազուեստ «չհանգած կիր»՝ հուն. ασβεστός, Մալխասյանը նախընտրում է նաև հեղուած ձևը և վերո-հիշյալ նախադասությունը թարգմանում. «Եվ երբ մարդ նայի քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես է թվում, թե ճարպ է ածած այնտեղ»¹⁹, նկատենք, որ ազուեստ հայկազյան բառարանները չունեն:

Մարսիկեան—«...զոր ոչ կարացին բուծել արիողական կախարդքն և մարսիկեան բծիշկքն» (226): Հստ Մալխասյանի ծանոթագրության, առիթ-դական (որն ի դեպ բառարանները դարձյալ չունեն) լատ. ariolus կամ

¹⁹ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913:

²⁰ Մ Ո Վ Ո Ն Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի Ց. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի. Երևան, 1961, էջ 196:

hariolus բառն է, որ նշանակում է գուշակիչ, հմայիչ: Մարսիկեանը՝ marsi՝ ժողովրդի անունից, որ բնակվում էին լատիոնում և հայտնի էին իբրև կախարդներ և օձերի թուլիչներ²⁰:

Միագլուխ—«Որ միագլուխ սպարապետ էր ամենայն հայոց զօրաւար» (262): Բառարանները ունեն՝ միագլխապետ, որ դարձյալ եզակի վկայություն է: Քննական բնագիրը տարբեր ձեռագրերի համեմատությամբ դնում է միագլուխ:

Որձափառեսու—«Վասն որոյ... սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանգայ» (168): Խորենացին կիրառել է նաև որձափառ, որ կա նշձ-ում:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՉԻ

ա) Պատմության մեջ

Աղեղնաձայն—«Որ ոմանք զհետ ցուցն և այժմանցն արշաւելով՝ զխիւզախական զաղեղնաձայնն եւեթ բարբառիցեն և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ զգործ կորովածիգ արանցն ցուցանեն» (10):

Այրացի «քաջ»—«Եւ արքայդ վրաց Վախթանգ այրացի է. ո գիտէ, և բազում ողորմն Աստուած...» (119): Փարպեցին ունի և մտացի «խելոք» (52, 63):

Անձնաբարձութիւն «մարմինը քարշ տալը»—...ի սաստկութենէ և ի կարևոր վիրացն, զոր ունէաք ի մարմնի մերում՝ մերթ ի սող և մերթ անձնաբարձութեամբ հասաք առ միմեանս» (141): Այս նախադասության մեջ կարեւոր թերևս ուղղելի է կարելի:

Աշխարհակորուստ—«...ես աշխարհակորուստ արանցն ողջ ոչ տալի գնալ յաշխարհէս Հայոց» (143): Նշձ-ն այս օրինակը բերում է աշխարհակորոյս բառի տակ:

Արուեստող—«Ձոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդօքն յօրինուածովքն» (10): Արուեստող ձեռն նշանակում է «արհեստավոր, ճարտարագործ»:

Գետառու—«Կարծէր ի տեղիսն ուրէք անյայտս գետառուին թաքշել» (150):

Խանտածութիւն «նախանձ»—«Թեպէտ և զխանտածութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս...» (178):

Կշռողութիւն—«Ոչ է յաղթութիւն ի բազումս և ի սակաւս, այլ ի վերին կշռողութեան ձեռինն» (121): Վերին կշռողութիւն ակնարկում է աստծուն:

Հապստեպ—«...մանաւանդ իբրեւ հապստէպ լսէր զնախանձորդացն զբանսարկութիւն» (112):

Մարթութիւն «հմտութիւն»—«Եւ իշխան ...սիրէր զկապեալսն հայոց յոյժ և զքաջութիւն նոցա և զլաւ բարս և զմարթչութիւնն բազում անգամ զրով ծանուցանէր մեծամեծացն» (108):

Միամոյլ—«Ինքն Կամսարականն միամոյլ... յերիվարն հեծանէր» (66):

Յետսահարութիւն—«Վասն զի թէ զապստամրութենէդ քումմէ հարցանեմք, թէ զիարդ իշխեցէր՝ խորհել, թող թէ և առնել՝ պատասխանի տուեալ ասես, թէ չճանաչողութիւնն Պերոզի և ի յետսահարութիւն բռնադատեաց զիս մեռանել» (166): Բառը կարելի է թարգմանել «արհամարհանք, իրենից վանել»:

Շատագոյն—«Մի՛ շատագոյն ուրախասցի աղմկելով զբաղաքն շարդեն» (125):

²⁰ Նույն տեղում, էջ 396:

²¹ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան. Տփղիս, 1904:

Սենդականութիւն «սնունդ» — «Դիել կաթն յօժարեցուցէք զտգէտսն ի սննդականութիւն» (181):

Ստուգախօսութիւն — «Յտուն պատասխանի միարանութեամբ, էր ինչ ստուգախօսութեամբ և էր որ եպերանօք» (78): ՆշՔ-ն ունի ստուգախօս:

Սանմանակցութիւն — «Եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ վայր մի առ լերամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն խաղտեաց» (74): Բառը վեց անգամ վկայված է Փարպեցու Պատմության մեջ (74, 121, 132, 3, 136, 148), բայց զարմանալիորեն զրաբարի բառարանները չեն ավանդել: Ունի «մերձ, մոտ, սահմանակից» իմաստը:

Սրտմեռեալ — «...իբրեւ տեսանէր ...զահաւոր զօրութիւն հակառակորդին վահանայ Մամիկոնենի՝ զմտաւ ածել յիշէր զանընդդիմակայ զօրութիւնն, սրտմեռեալ զարհուրէր» (153): Որոշ օրինակներում՝ սրտմեռալ: Սրտմտիմ նշանակում է «բարկանալ, զրգովել»: Ուրեմն, պետք է ընդունել սրտմեռեալ ձևը, որ համանիշ է սրտաթափ-ին և նշանակում է «վախենալ»:

Վատենդեալ — «Վասն զի այնպէս զարհուրեցուցեալ ապշեցոյց և վատենդեալ աշխատեաց զմեզ ապստամբն Վահան» (156):

Փառատեակերպ — «Սատանայ փարաւոնակերպ... սուգեալ կիզու» (179):

բ) Թղթում

Ախոյսնաբեկ «քաջ, թշնամուն ջախջախող» — «Ջախոյանաբեկ... զայրն զԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել» (189):

Անդիմակայ «հակառակ, անդիմակայելի» — «Անդիմակայ արդարեւ, ըստ գրեւումն յօհնութեանց, երկոքին սոքա, սէր և նախանձ» (200):

Անժամակերութիւն «որկրամոլութիւն» — «Անժամակերութեամբ եպե-րէին» (189):

Անյօղակապ — «Ջայնս անյօղակապս արձակեալ յաթոնն» (200):

Դիտեաբար — «Ի նախնումն գիտնաբար խօսէր Ղազար և այժմ անգիտաբար» (200):

Ժողովդակեցոյց — «Ի ձեռն նախանձու... զժողովդակեցոյց զԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել» (189):

Կռաւքիւն — «Այր քաջ էր և կռաւքիւն» (187):

Կոյաջուր — «Ըստ խոզի հարսնացելոյ կոյաջուր բաղանիք» (193):

Հոգաւորութիւն — «Սնուցանէ ...ըստ իրեանց հոգասիրութեանն» (188):

Հրաքակ — «Դիւրագերծ կարէ լինել հրաքակ շար ձգողացն» (192):

Ճգնափորձալից — «Ջմնացորդս շարշարանաց... յիւրում ի ճգնափորձալից ի մարմնի կրէր» (191):

Մանածայն — «Լուեալ զդռնչին մահածայն աղեղացն՝ աղօթեաց» (202):

Յերկարայուշ — «Այր յերկարայուշ և անմոռաց» (197):

Չպանեցողութիւն — «պաս չպահելը» — «Չպահեցողութեամբ եպերէին» (189):

Պարեգօտաւոր — «Պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս» (180):

Պաղատութիւն «հասույթ» — «Յրեւեցան յիս հրամանատարք բանի քում»... պաղատութիւն տեղւոյն հարցանելով»: Բառարանները ունեն պաղատումութիւն:

Տրութիւն բաղադրիչով կազմութիւնները խորթ չեն V դարի երկրորդ կեսի գործերին: Փարպեցին ունի նաև զրուցատրութիւն:

Տգիտանալած — «Ոչ զլուսաւորիչն և զտիգիտահալած գրեանն նորա առ անգիտութեան Փաթաղիկէս կոչիցեն» (202):

Քիւնակալութիւն — «Ամոն... բազմաժամանակեայ քիւնակալութեամբ ըսպանաւ եղօրէն» (190):

Քրիստոսանմանութիւն — «Ո՛ր աներկիւղութիւն քաջ հովվի է. ո՛ր քրիստոսանմանութիւն առողջ հայրապետի» (199):

Ամենայն հավանականությամբ Փարպեցու «Թուղթը» ՆՀԲ-ի հեղինակները չեն օգտագործել, Ալլապես այդ փոքրածավալ երկից երկու տասնյակի հասնող բառեր գուրս չէին մնա բառարանից:

Ինչպես ասանք, հարուրից ավելի բառեր տեղ չեն գտել ՆՀԲ-ում: Դրանց գերակշիռ մասը ածանցավոր կամ երկարմատ կազմություններ են՝ ընտրող հայերենի բառակազմական օրինաչափություններին:

Այս կարգի բառերի վերհանումը, իմաստների ճշգրտումներն ու լրացումները գրարարի բառապաշարի ուսումնասիրություն լինելուց զատ, կարեւորվում են նաև որպես հայոց լեզվի պատմական բառարանի նյութ: Այդ բառարանի պատաստման աշխատանքներին ձեռնամուխ է եղել ԳԱ լեզվի ինստիտուտը, առաջին հաաորը պետք է ընգրկվի V դարը:

НЕЗАСВИДЕТЕЛЬСТВОВАННЫЕ В «НОВОМ СЛОВАРЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА» СЛОВА ОРИГИНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ V ВЕКА

Л. Ш. АВАНЕСЯН

Резюме

Изучение литературы V в. показывает, что значительное количество слов не зарегистрировано в двухтомном «Новом словаре армянского языка» (Венеция, 1836—1837 гг.). В статье приводится более ста слов, часть из которых вообще не засвидетельствована в словарях древнеармянского языка. Кроме выявленных слов (как материала для исторического словаря) даются смысловые комментарии и текстологические уточнения оригиналов.